

2.6. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Մինչև 2011 թվականը շարունակվել են արտաքին առևտրի, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, համախառն արտաքին պարտքի գծով ցուցանիշների հաշվարկման աշխատանքները, ի թիվս պետական վիճակագրական հաշվետվությունների միջոցով հավաքագրվող տեղեկությունների, օգտագործելով նաև համապատասխան ոլորտի վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից (մաքսային վիճակագրության մասով), Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ու Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ներկայացվող համապատասխան տեղեկանքներում ներառված տվյալները:

Համաձայն Ծառայության և ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) միջև 2010 թվականի դեկտեմբերի 17-ի ստորագրված երկկողմանի փոխըմբռնման հուշագրի դրույթների, 2011 թվականից սկսած ՀՀ վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և արտաքին պարտքի (արտաքին հաշիվների) վիճակագրության վարումը (վերջնական կառուցումը) Ծառայությունից տեղափոխվել է ՀՀ ԿԲ: Համաձայն փոխըմբռնման հուշագրի, ՀՀ արտաքին հաշիվների որոշ հոդվածների վերաբերյալ (հիմնականում մասնավոր հատվածի գծով) տեղեկատվությունը հավաքագրվելու է Ծառայության կողմից և ամփոփ տեսքով (ըստ վճարային հաշվեկշռի ստանդարտ հոդվածների) տրամադրվելու է ՀՀ ԿԲ-ին: Միևնույն ժամանակ, ՀՀ վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և համախառն արտաքին պարտքի վերաբերյալ վերջնական ցուցանիշները ՀՀ ԿԲ-ն կտրամադրի Ծառայությանը՝ Ծառայության հրապարակումներում և տվյալների բազաներում զետեղելու համար:

Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում կազմվել են.

-2010-2011 թվականների ՀՀ վճարային հաշվեկշռները և 2012 թվականի I, II և III եռամսյակների վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի «Ապրանքներ և ծառայություններ» հոդվածները,

-2010-2011 թվականների ՀՀ միջազգային ներդրումային դիրքը,

-2010-2011 թվականների ՀՀ համախառն պարտքի դիրքը, ըստ տնտեսության հատվածների, ֆինանսական գործիքների և ժամկետայնության:

ՀՀ վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և համախառն արտաքին պարտքի վերաբերյալ ցուցանիշներ 2012 թվականից զուգահեռաբար հաշվարկվել են Արժույթի միջազգային հիմնադրամի «Վճարային հաշվեկշռի ձեռնարկ 5»-ի և «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկ 6»-ի մեթոդաբանության:

Աշխատանքներ են իրականացվել օտարերկրյա (ներառյալ՝ օտարերկրյա ուղղակի) ներդրումների հաշվառման դաշտի բարելավման և ցուցանիշների գնահատման մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ:

Սկսած 2009 թվականի մայիսից, Ծառայության պաշտոնական կայքէջում գետեղվել են ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշների (արտահանում և ներմուծում՝ ըստ ապրանքի ծագման երկրի և առևտուր անող երկրի հատկանիշների) տեղեկատվական շտեմարաններ ամսական կտրվածքով, որոնք ընդգրկում են տեղեկատվություն 1995 թվականից ըստ գործընկեր երկրների: Շտեմարանն արդիականացվում է ամսական պարբերականությամբ:

Տարեկան պարբերականությամբ հրապարակվել են՝

1. «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը» վիճակագրական ժողովածուն (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 2-նիշ դասակարգման), որն արտացոլում է 2006-2011թթ. արտահանման և ներմուծման ծավալները (բնափրային և արժեքային արտահայտությամբ) ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի բաժինների և խմբերի, ըստ առանձին երկրների, ամփոփ՝ ԱՊՀ երկրներով, արտաքին աշխարհի և Եվրոպական միության երկրներով, ըստ «Միջազգային առևտրի ստանդարտ» և «Ընդլայնված տնտեսական կատեգորիաների» դասակարգման:

2. «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը» վիճակագրական ժողովածուն (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման), որն արտացոլում է արտահանման և ներմուծման ծավալները (բնափրային և արժեքային արտահայտությամբ) ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի դիրքերի (ենթախմբերի), ինչպես նաև առանձին՝ ըստ բեռնամաքսային հայտարարագրերի տվյալների (իրավաբանական անձինք), ըստ ֆիզիկական անձանց կողմից կազմակերպած առևտրի տվյալների:

3. «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը» վիճակագրական ժողովածուն (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 8-նիշ դասակարգման), որն արտացոլում է արտահանման և ներմուծման ծավալները (բնափրային և արժեքային արտահայտությամբ) ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի բաժինների և խմբերի:

4. «Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է հանրապետության արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ տվյալները:

5. «Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային և արտաքին պարտքի դիրքերը» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է երկրի ֆինանսական ակտիվների

ու պարտավորությունների պաշարների մակարդակը ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ: